

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 49/7**

**24 նոյեմբերի 2015 թ.**

Քննարկվեց «Այգեծորի Առողջության Կենտրոն» ՊՈԱԿ 26.10.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ կողմից հաշվարկված պարտավորությունը վերանայելու վերաբերյալ:

#### **«Այգեծորի Առողջության Կենտրոն» ՊՈԱԿ գանգատում բերված փաստարկները.**

2014 թ-ի հոկտեմբեր ամսվա հաշվետվությունը «Այգեծորի Առողջության Կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև Կազմակերպություն) կողմից տեխնիկական պայմաններից ելնելով սահմանված ժամկետում չի ներկայացվել Տավուշի ՏՀՏ: Այդ մասին Տավուշի ՏՀՏ-ն ժամանակին չի տեղեկացրել և բացը նկատվել է պատահականորեն: Սույն թվականի օգոստոս ամսին կազմակերպությունն ինքնուրույն վերացրել է թերացումը՝ վճարելով նաև 617.133 դրամ: Կազմակերպությունը ՀՀ ֆինանսների նախարարին հասցեագրված գրությամբ խնդրել է հաշվարկված տույժ-տուգանքները զիջել, սակայն իրավաբանական վարչության պետի գրությամբ խնդրանքը մերժվել է:

Այգեծոր և Չինարի գյուղերը սահմանապահի կարգավիճակ ունեն, վտանգավոր չափերի հասած արտագաղթով: Այս կապակցությամբ կազմակերպության տնօրենը հայտնում է, որ դժվարությամբ է կարողանում լուծել կադրային հարցերը, մասնավորապես՝ չունի հաշվապահ, կազմակերպության հաշվապահությունը վարելու համար: Հայտնվում է նաև, որ 2014 թ-ին պետպատվերից կազմակերպությունը ստացել է 21.9 մլն դրամ, աշխատավարձի և հարկերի ձևով վճարելով մոտավորապես 25 մլն դրամ, իսկ պակասը լրացվել է վճարովի ծառայությամբ հայթայթված միջոցներից, որը Հայաստանի պայմաններում եզակի է: Միաժամանակ հայտնվում է, որ գյուղի ինտերնետային կապի որակը շատ վատ է, այսինքն՝ 711.729 դրամ տույժ-տուգանք մուծելը վերոշարադրյալ հանգամանքների պատճառով նման հիմնարկի համար շատ դժվար է և նաև անարդար, քանի որ կազմակերպությունը մշտապես կատարել է հարկային պարտավորությունները:

Ելնելով վերոգրյալից՝ կազմակերպությունը խնդրում է վերանայել լրացուցիչ հաշվարկված պարտավորությունը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Այգեծորի Առողջության Կենտրոն» ՊՈԱԿ կողմից 2014 թ-ի եկամտային հարկի հոկտեմբեր ամսվա հաշվարկը ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետից ուշ՝ 27.08.2015 թ-ին: Ուշ ներկայացված հաշվարկի նկատմամբ կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով

նախատեսված պատասխանատվությունը՝ հաշվարկվել է տուգանք 440.613 դրամի չափով:

20.11.2015 թ-ի դրությամբ կազմակերպության եկամտային հարկի պարտավորությունը կազմում է 1.126.773 դրամ, որից ապառք՝ 409.102 դրամ, տույժ՝ 277.058 դրամ, տուգանք՝ 440.613 դրամ: Ապառքն առաջացել է 2015 թ-ի հոկտեմբեր ամսվա հաշվարկից, տույժը՝ օրենքով սահմանված ժամկետից ուշ հարկի գումարը վճարելուց, իսկ տուգանքը՝ եկամտային հարկի 2014 թ-ի հոկտեմբեր ամսվա հաշվարկն օրենքով սահմանված ժամկետից ուշ ներկայացնելուց:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ կազմակերպության կողմից 2014 թ-ի եկամտային հարկի հոկտեմբեր ամսվա հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելը պայմանավորված է Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերում ինտերնետային կապի ցածր որակով:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված խախտման առկայության համար անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հաշվետվությունը (հաշվարկը) ներկայացնող անձի կողմից արարքը (խախտումը) կատարված լինի մեղավորությամբ: Հետևապես, սույն գործով իրականացվող վարչական վարույթի ընթացքում անհրաժեշտ է նախ պարզել կազմակերպության վարքագծում մեղքի առկայության փաստը:

Հանձնաժողովը գտնում է, որ Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերում ինտերնետային կապի ցածր որակի հետևանքով ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում 2014 թ-ի եկամտային հարկի հոկտեմբեր ամսվա հաշվարկի չներկայացումը չի կարող հիմք հանդիսանալ կազմակերպության նկատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվությունը կիրառելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Յ Ո Ւ Մ Է՝

«Այգեձորի Առողջության Կենտրոն» ՊՈԱԿ անձնական հաշվի քարտից նվազեցնել 2014 թ-ի եկամտային հարկի հոկտեմբեր ամսվա հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելու համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի հիման վրա հաշվարկված պատասխանատվությունը:

Հանձնաժողովի նախագահ՝

  
  
Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ